զութիւններին, ազգագրական կազմին ու շրջապատին խակ ծանօթ չէին, չգիտէին, և Հայաստանի մասին ունէին նոյն պատկերացումը, ինչ որ մի Զելիի կամ Ուրուգուայի:

Յետոյ, տարօրինակ «ազգային» ներկայացուցչութիւն էր այդ. Զիբցերիա, Իտալիա, Հնդկաստան, Միջագետք, Եգիպտոս—այդտեղի գաղութները գալիս էին «հայ ազգին միակամ խղճը» արտայայտելու. ի՞նչ իրաւունքով: Ո՞վ էր տուել նրանց լիազօրութիւն խօսելու Հայաստանի և հայ ժողովրդի անունից:

Աւելին դեռ. հազիւ մէկ-երկու հարիւր ցաք ու ցրիւ հայեր ունեցող Իտալիան կամ Զուիցերիան «տուել էին» մէկական պատգամաւոր, 30—40,000 հայ ունեցող Ռումանիան էլ՝ մէկ. Անգլիայի երկու զոյգ մէկ կենտառաւտրականները ուղարկել էին 2 մարդ, 2 մարդ էր «ուղարկել» և 100,000 անդամ ունեցող պարսկահայ գաղութը, այն ինչ նոյնքան հայ հաշուող Ամերիկան տուել էր 4 պատգամաւոր:

Ժողովուրդ, աշխատաւորութիւնից ընտրուած մարդ այդ համագումարում չկար. բէյ, փաշա, էֆենտի, եպիսկոպոս, հարուստ վաճառական, արհեստով ազգային գործիչ — ահա ովքեր էին հաւաքուել «ազգին միակամ խղճը» արտայայտելու: Լաւագոյն դէպքում, եթէ մի պահ հրաժարուելու լինենք բոլոր ժողովրդապետական նախապաշարումներից, այդ հաւաքոյթը կարող էինք կոչել «գաղութահայ» համագումար, բայց ոչ երբեք «ազգային»: Գաղութահայութիւնն էր խօսում նրա մէջ՝ անպատասխանատու, զառանցող, անհող ու անապարծ:

Առաջ բերենք Համագումարի արդիւնքները այնպէս, ինչպէս որ ներկայացուած են պաշտօնական հրատարակութեամբ*):

«Ամփոփում Համագումարի նախապատրաստական հինգ նիստերուն և պաշտօնական բացումէն մինչև փակումը, այն է փետրուար 24-էն մինչև ապրիլ 22 դումարուած 38 նիստերուն, ընդամենը 43 նիստի մէջ կատարուած աշխատութեանց համառօտ մէկ ամփոփումը:

1. Ընտրութիւն Համագումարի դիւանին: Ընտրեցան՝ նախագահ վսեմ. Գ. Նորատունկեան, դեր-նախագահներ ՊՊ. փրոֆ. Տէր-Յակոբեան և Ա. Զորպանեան, ատենադպիրներ՝ ՊՊ. Վ. Թեքէեան և Ն. Տէր-Ստեփանեան. այս վերջնոյն հրաժարելէն յետոյ՝ Պ. Գ. Ֆնտզլեան:

2. Քննութիւն և վաւերացում Համագումարի ներքին կանոնագրին:

3. Քննութիւն և վաւերացում ժողովի իրաւասութեան և աշխատութեանց ծրագրին:

4. Վաւերացում նախապէս պատրաստուած և Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Հայկական Պահանջներու Ցիշատակագիրին:

5. Զեկուցում Ազգ. Պատւիրակութեան նախագահ վսեմ. Պօղոս Նուբար փաշայի՝ Պատւիրակութեան ի սկզբանէ մինչև այժմ կատարած աշխատութիւններուն և ստացած արդիւնքներուն վերաբերմամբ:

---

*) Ամփոփում Հայ Ազգային Համագումարի Աշխատութեանց և Որոշմանց (փետր. 24-էն մինչև ապր. 22):